

# Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման Հիմնադրամ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՍՈՎ

31 դեկտեմբեր 2024թ.

# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	Էջ 3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

05.06.2025թ.

N 022508

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ



Բերկեր Շիրի Արմենիա ՓԲԸ  
Հասվոր տնօրեն

Վ. Գևորգյան

### ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին*

#### **Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի ընկերության (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ)::

#### **Կարծիքի հիմք**

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

#### **ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX**

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

### **Այլ հանգամանք**

Հիմնադրամի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2024 թվականի հունիսի 25-ին տրված եզրակացությամբ արտահայտել է չձևավոխված կարծիք:

### **Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար :

### **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

- Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
- Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

### **ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX**

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Հիմնադրամի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր



Շ. Թաշխյան

05.06.2025թ.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Օտևթ.	2024թ.	(հազար դրամ) 2023թ.
<b>Ակտիվներ</b>			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		940	882
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	4	10,811	16,988
Ոչ նյութական ակտիվներ		500	500
Ներդրումներ ծրագրերում	5	553,854	482,142
Տրամադրված փոխառություններ	6	566,157	613,277
Դեբիտորական պարտքեր	7	186,451	190,489
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>1,318,713</b>	<b>1,304,278</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ		969	
Տրամադրված փոխառությունների ընթացիկ մաս	6	329,812	1,324
Դեբիտորական պարտքեր	7	45,737	452,475
Մնացորդներ բանկերում		206,448	43,022
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>582,966</b>	<b>144,392</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>1,901,679</b>	<b>1,945,491</b>
<b>Պարտավորություններ</b>			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ փոխառություններ	8	1,886,763	2,039,441
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	1,728,692	1,881,682
Վարձակալության գծով պարտավորություն	10	5,480	11,854
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>3,620,935</b>	<b>3,932,977</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մաս	8	237,508	13,749
Վարձակալության գծով պարտավորության կարճաժամկետ մաս	10	6,375	5,446
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	13,037	13,370
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>256,920</b>	<b>32,565</b>
<b>Զուտ ակտիվներ</b>			
Կուտակված արդյունք		(1,976,176)	(2,020,051)
<b>Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ</b>		<b>1,901,679</b>	<b>1,945,491</b>

Ալեքսանդր Քալանթարյան  
Տնօրենի ժ/պ

05/06/2025թ.



Գոհար Հովհաննիսյան  
Գլխավոր հաշվապահ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթ.	2024թ.	(հազար դրամ) 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից եկամուտ	12	175,881	152,446
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից գուտ եկամուտ/(ծախս)	13	21,217	(25,891)
Շնորհներից եկամուտ	9	152,990	145,058
Ֆինանսական ծախսեր	14	(243,218)	(235,020)
Ֆինանսական ակտիվների պարտքային կորուստների գծով ծախս		20,637	(203,462)
Ընդհանուր և վարչական ծախսեր	15	(83,555)	(154,496)
Այլ ոչ գործառնական (ծախս)/եկամուտ		(77)	362
<b>Շահույթ/(վնաս) մինչև հարկերը</b>		<b>43,875</b>	<b>(321,003)</b>
Շահութահարկի գծով ծախս		-	(68,202)
<b>Տարվա շահույթ/(վնաս)</b>		<b>43,875</b>	<b>(389,205)</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Այլ համապարփակ արդյունք		-	-
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>43,875</b>	<b>(389,205)</b>
Զուտ ակտիվները տարվա սկզբում		(2,020,051)	(1,630,846)
Զուտ ակտիվները տարվա վերջում		(1,976,176)	(2,020,051)

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Ծրագրերում ներդրումների օտարումից մուտքեր	24,449	71,542
Ծրագրերում ներդրումներից ստացված եկամուտ	20,056	16,316
Փոխառությունների մարում	237,127	148,568
Տրված փոխառություններից տոկոսային եկամտի ստացում	52,156	56,955
Բանկային հաշիվների մնացորդներից տոկոսային մուտքեր	6,935	7,715
Զուտ այլ մուտքեր	4,692	6,986
<b>Ընդամենը գործառնական մուտքեր</b>	<b>345,415</b>	<b>308,082</b>
Փոխառությունների տրամադրում	(25,830)	(102,170)
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ	(40,152)	(34,944)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ	(14,748)	(9,658)
Վճարումներ մատակարարներին	(17,654)	(21,233)
Զուտ այլ ելքեր	(7,317)	(9,860)
<b>Ընդամենը գործառնական ելքեր</b>	<b>(105,701)</b>	<b>(177,865)</b>
<b>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</b>	<b>239,714</b>	<b>130,217</b>
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Վարկերի մայր գումարի մարում	(70,915)	(70,915)
Վարկերից տոկոսների մարում	(98,867)	(100,016)
Վարձակալական վճարների մարում	(7,800)	(7,800)
<b>Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>	<b>(177,582)</b>	<b>(178,731)</b>
Բանկերում մնացորդների զուտ նվազում	62,132	(48,514)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(76)	108
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում	144,392	192,798
Բանկերում մնացորդներ տարվա վերջում	<b>206,448</b>	<b>144,392</b>

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **1 ԳՈՐԾԱՌԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՑԹՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՍՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը («Հիմնադրամ») հիմնադրվել է 2009թ. հունվարի 8-ին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 100 Ն որոշման:

Հիմնադրամը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի («ԳԶՄՀ») միջև 2008թ. հունվարի 8-ին ստորագրված և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հաստատված «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի ֆինանսավորման պայմանագրի պահանջների համաձայն:

Հիմնադրամի նպատակն է օժանդակել աղքատության նվազեցմանը՝ Հայաստանի գյուղական տարածքների տնտեսական զարգացման միջոցով:

Հիմնադրամի հիմնական նպատակը գյուղական վայրերի փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ֆինանսավորումն է, ինչը թույլ է տալիս այդ ձեռնարկություններին բարելավել իրենց մրցակցային դիրքերը շուկայում:

Ֆինանսավորումն իրականացնելու համար Հիմնադրամը ստանում է շնորհներ՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամից, ինչպես նաև արտոնյալ պայմաններով փոխառություններ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից:

Հիմնադրամը ղեկավարում է Հոգաբարձուների խորհուրդը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի գլխավորությամբ:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0014, Մամիկոնյանց փ. 39ա, իսկ գործունեության հասցեն՝ ք.Երևան, Փարպեցի 22, բն. 3:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ-ին կազմել է 6 մարդ (2023թ.՝ 6 մարդ):

### **2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

#### **2.1 Համապատասխանություն**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներին»:

#### **2.2 Զափման հիմքեր**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա (զեղչված) արժեքով:

#### **2.3 Գործառնական և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, դեկլարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

#### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի դեկլարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում Ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են Ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 15-ում:

#### 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

#### Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում» ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- «Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ» (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- «Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում» (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- «Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ» (ՀՀՄՍ 12 փոփոխություն)
- «Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 մոդելային կանոններ» (ՖՀՄՍ ստանդարտի փոփոխություն ՓՄՁ-ների համար)

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում», փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2 «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»

ՀՀՄՍ 1 փոփոխությունները և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ը տրամադրում են ուղեցույց և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառելու էականության վերաբերյալ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտելիս: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին տրամադրել ավելի օգտակար տեղեկատվություն հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին՝ փոխարինելով հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականության բացահայտման պահանջը հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականության բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպությունները կիրառեն էականության հայեցակարգը:

**Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից**

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»
- ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»:

**3 ՀԱՇՎԱՊԱՀԱՎԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**3.1 Արտարժույթ**

*Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 Եվրոն՝ 413.89 ՀՀ դրամ, 1 ռուսական ռուբլին՝ 3.71 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 Եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ, 1 ռուսական ռուբլին՝ 4.50 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

**3.2 Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը,

հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Վահույք և պարագաներ	-	3-5 տարի
Համակարգչային և գրասենյակային տեխնիկա	-	1-5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5 տարի

### **3.3 Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը համակարգչային ծրագրերի և լիցենզիաների համար կազմում է 5 տարի:

### **3.4 Վարձակալական ակտիվներ**

Հիմնադրամը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Հիմնադրամն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Հիմնադրամի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Հիմնադրամը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Հիմնադրամը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Վարձաժամկետ վարձակալություններ

Հիմնադրամը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային

հիմունքով:

### 3.5 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, հումքի կամ նյութի ձևով, արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գույտ արժեքից նվազագույնով: Իրացման գույտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) սկզբունքի կիրառմամբ, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

### 3.6 Ֆինանսական գործիքներ

#### *Ճանաչում և սկզբնական չափում*

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

#### *Դասակարգում և հետագա չափում*

##### Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Հիմնադրամը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Առևտրական նպատակներով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Հիմնադրամը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել ներդրման իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է

առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Հիմնադրամը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Հիմնադրամը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Հիմնադրամը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները:

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ռոջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի զեղչով կամ հավելված արժեքով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամկետ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարի չափով, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է պայմանագրի անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսները (կարող են ներառել լրացուցիչ ռոջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման պայմանի իրական արժեքն էական չէ սկզբնական ճանաչման պահին:

*Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս*

*Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

*Ֆինանսական պարտավորություններ – Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս*

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախատեսված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ շահույթը և վնասը, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթ կամ վնաս նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

*Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն*

*Ֆինանսական ակտիվներ*

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Հիմնադրամն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Հիմնադրամը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Հիմնադրամը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Հիմնադրամը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

*Ֆինանսական պարտավորություններ*

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական

պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Հիմնադրամը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Հիմնադրամը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Հիմնադրամն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Հիմնադրամը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

### *Ապաճանաչում*

#### *Ֆինանսական ակտիվներ*

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Հիմնադրամը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Հիմնադրամն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

#### *Ֆինանսական պարտավորություններ*

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Հիմնադրամը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ

փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

#### *Հաշվանցում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են գուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Հիմնադրամն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

### **3.7 Արժեզրկում**

#### *Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների արժեզրկում*

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, պայմանագրային ակտիվների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներում ներդրումների, սակայն ոչ՝ բաժնային գործիքներում ներդրումների համար: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ պարտքային վնասն ավելի շուտ է ճանաչվում, քան պահանջվում էր ՀՀՄՍ 39-ով:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մոդելի գործողության ոլորտում գտնվող ակտիվների համար սովորաբար ակնկալվում է, որ արժեզրկումից կորուստները կաճեն և կդառնան առավել փոփոխական: Հիմնադրամը որոշել է, որ ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջների կիրառումը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ չի հանգեցնում արժեզրկման գծով լրացուցիչ պահուստի ճանաչմանը:

Հիմնադրամը ճանաչում է սպասվող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:

Հիմնադրամը չափում է վնասի գծով պահուստը ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով.

- (i) Պարտքային արժեթղթեր, եթե որոշվել է, որ դրանք ունեն ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ և
- (ii) այլ պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվների մնացորդներ, որոնց գծով պարտքային ռիսկը (օրինակ, ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի ընթացքում պարտականությունների չկատարման ռիսկ) էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների վնասի գծով պահուստը միշտ չափվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Հիմնադրամը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղի է և հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Հիմնադրամի նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հիմնադրամն ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Հիմնադրամը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- (i) հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Հիմնադրամը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- (ii) ֆինանսական ակտիվն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում (կամ ավելի կարճ ժամկետի ընթացքում, եթե գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի:

*Սպասվող պարտքային վնասի չափում*

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Հիմնադրամը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալում է ստանալ):

*Արժեզրկված ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

- Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.
- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
  - պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ավելի քան 180 օր ուշացումը,
  - Հիմնադրամի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Հիմնադրամն այլ պայմաններում չէր դիտարկի,
  - փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը կամ
  - արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

*Սպասվող պարտքային վնասի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

*Դուրսգրում*

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Հիմնադրամը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Հիմնադրամը չի ակնկալում դուրս գրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրս գրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Հիմնադրամի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

*Անորոշիվացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Հիմնադրամն այս ակտիվները դիտարկում է արժեզրկման վկայության առանձին և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, այս ակտիվները գնահատվում է հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով:

Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Հիմնադրամը դիտարկում է փոխհատուցման ժամկետների և կրած վնասի գումարի նախորդ ժամանակաշրջանների տեղեկատվությունը և կատարում է ճշգրտում, եթե ընթացիկ տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինե՞ր նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Հիմնադրամը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

**3.8 Ծնորհներ**

Ծնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Ծնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Պետությունից ստացված շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառությունների նումինալ և իրական արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է որպես պետական շնորհ: Ծնորհը սխտեմատիկ հիմունքով ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ փոխհատուցելով արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված համապատասխան փոխառությունների ֆինանսական ծախսերը:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Ծնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

**3.9 Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

### 3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

### 3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայություններ: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջկած գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջկած գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

#### Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայություններին հանդիպում աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

#### *Պարզևավճարներ*

Պարզևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:  
Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

### **3.12 Եկամտի ճանաչում**

Եկամուտները չափվում են ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Հիմնադրամի կողմից տրամադրված ցանկացած իջեցումների գումարները:

#### *Շահաբաժիններից և տոկոսներից եկամուտ*

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ սահմանված է վճարը ստանալու՝ Հիմնադրամի իրավունքը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը:

#### *Ներդրումների օտարումից եկամուտ*

Ներդրումների օտարումից եկամուտը ճանաչվում է, երբ Հիմնադրամը գնորդին է փոխանցել ներդրման սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, և երբ հնարավոր է արժանահավատորեն չափել եկամտի և գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումների գումարները:

### **3.13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	(հազար դրամ)
	Գրասենյակային տարածք
<b>Սկզբնական արժեք</b>	
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	28,882
Վերաչափում	(28,882)
Ավելացումներ	18,532
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,532
Ավելացումներ	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,532
<b>Մաշվածություն</b>	
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	21,334
Վերաչափման հետևանքով դուրսգրում	(26,746)
Տարեկան ամորտիզացիա	6,956
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,544
Տարեկան ամորտիզացիա	6,177
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,721
<b>Զուտ հաշվեկշռային արժեք</b>	
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,988
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,811

5 Ներդրումներ ծրագրերում

Հիմնադրամին պատկանող ներդրումների մանրամասները ներկայացված են ստորև

	(հազար դրամ)			
2024թ.	Բաժնեմասը՝ տոկոսային արտահայտությամբ	Ներդրման անվանական արժեք	Ներդրման իրական արժեք	Բաժնետոմսերի հետզման ժամկետ
«Ագրոլոգ» ՓԲԸ	35.30%	105,000	114,199	15 նոյեմբեր 2026
«ԷՐԻՉ» ՓԲԸ	33.64%	185,000	185,470	15 նոյեմբեր 2027
«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	43.15%	100,000	70,952	31 դեկտեմբերի 2026
«Գոֆրոլայն» ՓԲԸ	36.99%	190,815	183,233	31 դեկտեմբերի 2026
		<b>580,815</b>	<b>553,854</b>	

	(հազար դրամ)			
2023թ.	Բաժնեմասը՝ տոկոսային արտահայտությամբ	Ներդրման անվանական արժեք	Ներդրման իրական արժեք	Բաժնետոմսերի հետզման ժամկետ
«Ագրոլոգ» ՓԲԸ	35.30%	105,000	101,778	15 նոյեմբեր 2026
«ԷՐԻՉ» ՓԲԸ	33.64%	185,000	160,681	15 նոյեմբեր 2027
«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	43.15%	100,000	70,952	31 դեկտեմբերի 2026
«Գոֆրոլայն» ՓԲԸ	36.99%	190,815	148,731	31 դեկտեմբերի 2026
		<b>580,815</b>	<b>482,142</b>	

Համաձայն բաժնետոմսերի բաժանորդագրության պայմանագրերի՝ Հիմնադրամը ներդրումներ է կատարում տարբեր ընկերություններում սովորաբար 20-49%-ի սահմաններում: Համաձայն այդ պայմանագրերի՝ ներդրման օբյեկտ ընկերությունների մյուս բաժնետերերն իրավունք ունեն ցանկացած պահին Հիմնադրամից հետ գնել բաժնետոմսերը:

*Շահութաբաժինների հաշվարկման պայմանները*

Կատարված ներդրումների դիմաց Հիմնադրամը բաժնետոմսերի բաժանորդագրության պայմանագրերի համաձայն իրավունք ունի ստանալ շահաբաժիններ իր ներդրման չափին համապատասխան, որոնք պետք է հաշվարկվեն ներդրման օբյեկտ ընկերությունների և այդ ընկերությունների այլ բաժնետերերի կողմից երաշխավորված նվազագույն եկամտաբերության հիման վրա: Այն դեպքում, երբ ընկերությունների գործունեության արդյունքում ստացված եկամտաբերությունը չի բավարարի տարեկան շահութաբաժին վճարելու համար, որը կազմում է Հիմնադրամի ներդրման արժեքի առնվազն 5 %-ը (նվազագույն եկամտաբերություն), ընկերությունների այլ բաժնետերերը պարտավորվում են վճարել հաշվարկված շահաբաժին և նվազագույն եկամտաբերության տարբերությունը:

*Ներդրման օտարման պայմանները*

Համաձայն բաժնետոմսերի բաժանորդագրության պայմանագրերի՝ յուրաքանչյուր պայմանագրով նախատեսված մարման ամսաթվին Հիմնադրամը պարտավոր է վաճառել ընկերությունների սովորական բաժնետոմսերը, և ընկերությունների մյուս բաժնետերերը պետք է Հիմնադրամից հետ գնեն բոլոր բաժնետոմսերը:

Բաժնետոմսերի օտարման գինն ըստ պայմանագրի պետք է հաշվարկվի հետևյալ բաղադրիչների հիման վրա՝

- Ներդրման գումարի մնացորդը
- Մինչև վաճառքի պահը հաշվարկված և ընկերությունում վերաներդրված շահութաբաժնի գումարը
- Ժամկետանց պարտավորությունների նկատմամբ կիրառված տույժերը
- շուկայի հավելվածարը, որը հաշվարկվելու է որպես շրջանառության աճի 2%-ը, այն է ելքի պահին նախորդ երկու տարիների միջին շրջանառության և ներդրմանը նախորդող տարվա շրջանառության միջև տարբերությունը՝ որպես բաժնետոմսերի թանկացում:

Ծրագրերում ներդրումների իրական արժեքի չափման մանրամասները նկարագրված են ծանոթագրություն 18-ում:

**6 Տրամադրված փոխառություններ**

Ստորև ներկայացված են դեռևս չմարված փոխառությունների պայմանները 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

2024թ.	Անվանական տոկոսադրույք	Մարման ժամկետ	Համախառն գումար	Արժեզրկման պահուստ	(հազար դրամ)
					Հաշվեկշռային արժեք
«Ագրոլոգ» ՓԲԸ	8%-12%	2025թ.	57,596	-	57,596
«Ալկամար» ՍՊԸ	12%	2026թ.	120,541	-	120,541
«Գոֆրոլայն» ՓԲԸ	5%-8.5%	2025-2027թթ.	79,262	-	79,262
«Միս Նատուրալ» ՓԲԸ	10%	2025թ.	31,166	-	31,166
«Արգնի մսամթերք» ՓԲԸ	-	2028թ.	59,796	-	59,796
«Էս-Էֆ թրեյդ» ՍՊԸ	10%-12%	2024թ.	7,807	-	7,807
«Ա.Օսիպյան» ՍՊԸ	8.00%	2030թ.	269,123	(11,105)	258,018
«Թրասթ Մենեջմենթ» ՍՊԸ	12%	2025թ.	150,829	(41,979)	108,850

**Հայաստանում գյուղական տարածքների  
տնտեսական զարգացման հիմնադրամ**

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
31 դեկտեմբեր 2024թ.**

«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	10%-12%	2025-2026թթ.	227,294	(176,797)	50,497
«Բերդավանի գինու գործարան» ԲԲԸ	13%	2026թ.	197,012	(144,424)	52,588
«Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲԸ	12%	2022թ.	53,147	(23,723)	29,424
«Գեչի-15» ՍՊԸ	10%-12%	2024թ.	33,226	(24,657)	8,569
«Մարշալ Լոջիստիքս» ՍՊԸ	12%	2025թ.	44,029	(13,767)	30,262
«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ	12%	2020թ.	64,367	(64,367)	-
«Գարբուշ» ՍՊԸ	10%-12%	2021-2024թթ.	275,910	(274,317)	1,593
			<b>1,671,105</b>	<b>(775,136)</b>	<b>895,969</b>

2023թ.	Անվանական տոկոսադրույք	Մարման ժամկետ	Համախառն գումար	(հազար դրամ)	
				Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
«Ագրոլոգ» ՓԲԸ	8%-12%	2025թ.	53,024	-	53,024
«Ալկամար» ՍՊԸ	12%	2026թ.	234,950	-	234,950
«Գոֆրոլայն» ՓԲԸ	5%-8.5%	2024-2027թթ.	105,410	-	105,410
«Միս Նատուրալ» ՓԲԸ	10%	2025թ.	62,132	-	62,132
«Արգնի մսամթերք» ՓԲԸ	-	2028թ.	37,561	-	37,561
«Էրիզ» ՓԲԸ	8%-12.5%	2024թ.	9,936	-	9,936
«Էս-էֆ թրեյդ» ՍՊԸ	10%-12%	2024թ.	9,388	-	9,388
«Ա.Օսիպյան» ՍՊԸ	8.0%	2030թ.	297,593	(11,105)	286,488
«Թրասթ Մենեջմենթ» ՍՊԸ	12%	2025թ.	151,829	(41,979)	109,850
«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	10%-12%	2024-2026թթ.	220,615	(179,485)	41,130
«Բերդավանի գինու գործարան» ԲԲԸ	13%	2026թ.	197,012	(144,424)	52,588
«Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲԸ	12%	2022թ.	53,147	(23,720)	29,427
«Գեչի-15» ՍՊԸ	10%-12%	2024թ.	33,227	(24,657)	8,570
«Մարշալ Լոջիստիքս» ՍՊԸ	12%	2025թ.	39,066	(13,768)	25,298
«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ	12%	2020թ.	65,813	(65,813)	-
«Գարբուշ» ՍՊԸ	10%-12%	2021-2024թթ.	275,910	(275,910)	-
			<b>1,846,613</b>	<b>(780,861)</b>	<b>1,065,752</b>

Փոխառությունների գուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:  
Փոխառություններն արտահայտված են հայկական դրամով:

Տրված փոխառությունների պահուստի շարժը ներկայացված է ստորև.

	(հազար դրամ)	
	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	780,861	577,399
Պահուստի հակադարձում	(5,725)	-
Տարվա ընթացքում պահուստի աճ	-	203,462
Տարեվերջի մնացորդ	<b>775,136</b>	<b>780,861</b>

Մնանկ ճանաչված ընկերություններին տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքը որոշվել է՝ հաշվի առնելով գրավի ապահովության չափը: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սնանկ ճանաչված ընկերություններն են՝ «Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ն, «Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲԸ-ն և «Գեչի-15» ՍՊԸ-ն:

Տրամադրված փոխառություններն ապահովված են գրավով՝ անշարժ գույքով և/կամ փոխառուների անձնական երաշխավորությամբ: Փոխառությունների պարտքային ռիսկի ենթարկվածության մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 17-ում:

**7 Դեբիտորական պարտքեր**

	2024թ.	2023թ.
<i>(հազար դրամ)</i>		
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Դեբիտորական պարտքեր ներդրումների օտարումից	213,846	215,842
Այլ դեբիտորական պարտքեր	11,734	10,141
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(2,210)	(2,210)
Զուտ դեբիտորական պարտքեր	223,370	223,773
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	2,311	3,239
Կանխավճարված հարկեր	6,507	6,499
	<b>232,188</b>	<b>233,511</b>

Ներդրումների օտարումից դեբիտորական պարտքերի մանրամասները ներկայացված են ստորև.

	Ժամկետ	2024թ.	2023թ.
<i>(հազար դրամ)</i>			
«365 գրուպ» ՓԲԸ	2029թ.	90,094	93,352
«Վայոց Ձոր Մսամթերք» ՓԲԸ	2028թ.	71,742	70,888
«Արզնի մսամթերք» ՓԲԸ	2027թ.	49,800	49,392
		<b>211,636</b>	<b>213,632</b>

Դեբիտորական պարտքերի կորստի գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
<i>(հազար դրամ)</i>		
Տարեկգրի մնացորդ	2,210	2,210
Տարվա ընթացքում պահուստի ճշգրտում	-	-
Տարեվերջի մնացորդ	2,210	2,210

Հիմնադրման առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չի հաշվարկում: Երկարաժամկետ դեբիտորական պարտքերի զեղչման տոկոսադրույքները բացահայտված են ծանոթագրություն 18-ում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Դեբիտորական պարտքերն արտահայտված են հայկական դրամով:

Դեբիտորական պարտքերի պարտքային ռիսկի ենթարկվածության մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 17-ում:

**8 Երկարաժամկետ փոխառություններ**

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը փոխառություններ է տրամադրել Հիմնադրամին «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» և «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրերի իրականացման համար:

Ստացված վարկերի մանրամասները ներկայացված են ստորև:

Ծրագրի անվանումը	2024թ.	2023թ.	Պայմանագրի տոկոսադրույք	Արդյունավետ տոկոսադրույք	(հազար դրամ)
					Մարման ժամկետ
Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին	679,993	701,422	2%	14.30%	2047թ. հունվարի 25
Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն	1,444,278	1,351,768	3%	12.30%	2039թ. հունվարի 25
	<b>2,124,271</b>	<b>2,053,190</b>			

Ստացված փոխառությունները ճանաչման պահին ձևակերպվել են իրական արժեքով, իսկ իրական և պայմանագրային արժեքների միջև տարբերությունը ճանաչվել է որպես պետական աջակցություն և ներառվել է ակտիվներին վերաբերող շնորհներում (տես՝ ծանոթագրություն 9):

## 9 Ակտիվներին վերաբերող շնորհներ

	(հազար դրամ)	
	2024թ.	2023թ.
ՀՀ կառավարություն	1,710,712	1,851,133
Դանիայի Թագավորության կառավարություն	17,980	30,549
	<b>1,728,692</b>	<b>1,881,682</b>

Ակտիվներին վերաբերող շնորհների շարժը ներկայացված է ստորև.

	(հազար դրամ)	
	2024թ.	2023թ.
<b>Մնացորդը առ 01 հունվար</b>	<b>1,881,682</b>	<b>2,026,741</b>
Տարվա ընթացքում ավելացում	-	-
Եկամտի ճանաչում	(152,990)	(145,059)
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր</b>	<b>1,728,692</b>	<b>1,881,682</b>

ՀՀ կառավարությունից ստացված շնորհն իրենից ներկայացնում է ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված երկարաժամկետ փոխառությունների ճանաչման պահին նումինալ և իրական արժեքների միջև տարբերությունը (տես՝ ծանոթագրություն 8):

## 10 Վարձակալության գծով պարտավորություն

Հիմնադրամը գրասենյակային տարածք է վարձակալում Երևանում, Ղ. Փարպեցու փողոց 22 շենք, բնակարան 3 հասցեում: Ընթացիկ տարում Հիմնադրամը երեք տարի ժամկետով վերակնքել է գրասենյակային տարածքի վարձակալության պայմանագիրը:

Ապագա նվազագույն վարձավճարները արտացոլված են ստորև.

	Նվազագույն վարձավճարներ	
	2024թ.	2023թ.
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	7,800	7,800
Ֆինանսական ծախս	(1,427)	(2,355)
	<b>6,373</b>	<b>5,445</b>

Երկրորդից հինգերորդ տարիների ընթացքում

Վարձավճարներ	5,850	13,650
Ֆինանսական ծախս	(368)	(1,795)
	5,482	11,855
Զուտ ներկա արժեք	<b>11,855</b>	<b>17,300</b>

**11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Աշխատավարձի գծով պարտավորություններ	12,907	13,234
Այլ	130	136
	<b>13,037</b>	<b>13,370</b>

**12 Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից եկամուտ**

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Տրված փոխառությունների գծով տոկոսային եկամուտ	165,743	110,293
Դեբիտորական պարտքերի զեղչման հակադարձումից եկամուտ	4,038	34,437
Բանկային հաշիվներից եկամուտ	6,100	7,716
	<b>175,881</b>	<b>152,446</b>

**13 Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից գուտ եկամուտ/(ծախս)**

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Իրական արժեքի վերաչափումից վնաս	(5)	(48,948)
Հաշվեգրված շահաբաժիններ	21,222	23,057
	<b>21,217</b>	<b>(25,891)</b>

**14 Ընդհանուր և վարչական ծախսեր**

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և այլ հատուցումներ աշխատակիցներին	49,924	47,765
Մաշվածություն և ամորտիզացիա	6,270	7,258
Աուդիտ և խորհրդատվություն	3,917	3,916
Նորոգման և պահպանման ծախսեր	2,145	2,278
Արժեզրկման ճշգրտում	-	64,692
Այլ վարչական ծախսեր	21,299	28,587
	<b>83,555</b>	<b>154,496</b>

Այլ վարչական ծախսերը ներառում են ներդրման օբյեկտների ֆինանսական կայացմանն օժանդակելու համար տարատեսակ ծախսեր՝ տարբեր ցուցահանդեսներում ներկայացնելու, արտադրանքը գովազդելու և այլնի համար, ինչպես նաև Հիմնադրամը կրում է մոնիթորինգի և վերահսկողության ծախսեր՝ փոխհատուցելով վերջիններիս աուդիտի և խորհրդատվության այլ ծախսերը:

## 15 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա՝ ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

### 15.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամի իրականացում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

#### *Իրական արժեքի չափումը*

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզաձև ձևով գործարքի պարագայում (տե՛ս ծանոթագրություն 18):

#### *Երկարաժամկետ դեբիտորական պարտքերի իրական արժեք*

Երկարաժամկետ դեբիտորական պարտքերը սկզբնական ճանաչման ժամանակ չափվել են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվել է՝ զեղչելով համապատասխան դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների համար շուկայական տոկոսադրույքը, որը գնահատվել է 12%: Ղեկավարությունը դատողություն է կիրառել զեղչման տոկոսադրույքը որոշելու համար: Եթե ապագա դրամական միջոցների հոսքերը զեղչված լինեին այլ տոկոսադրույքով, 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկարաժամկետ դեբիտորական պարտքերի մնացորդը և տարվա արդյունքը կարող էին տարբերվել:

#### *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների արժեքը*

Հիմնադրամի ղեկավարությունը կիրառում է դատողություն ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների արժեքը հաշվարկելու համար՝ օգտագործելով ակնկալվող պարտքային կորուստների մոդելը: Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա: Տե՛ս ծանոթագրություն 17՝ Հիմնադրամի կողմից պարտքային ռիսկի առավել մանրամասն բացահայտման համար:

#### *Հետաձգված հարկային ակտիվների գնահատում*

2023թ. ապաճանաչվել են հետաձգված հարկային ակտիվները, որոնք հիմնականում առաջացել են ֆինանսական ակտիվների արժեքը կրճատելուց և իրական արժեքի ներկայացումից: Ղեկավարության համոզմամբ Հիմնադրամը չի ունենա բավարար հարկվող շահույթ հարկային ակտիվներն օգտագործելու համար:

### 15.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում իրականացված կարևոր դատողություններ

#### *Ծրագրերում ներդրումների հաշվառման մոտեցումը*

Հիմնադրամը դատողություններ է կիրառել ծրագրերում ներդրումների հաշվառման համար: Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 5-ում՝ Հիմնադրամի ներդրումները ընկերություններում կազմում են 20%-49%,

սակայն դրանք չեն դիտարկվել որպես ներդրումներ ասոցիացված ընկերություններում, համաձայն ՀՀՄՍ 28 «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում» ստանդարտի, և չեն հաշվառվել բաժնեմասնակցության մեթոդով, այլ հաշվառվել են որպես ֆինանսական գործիքներ ամորտիզացված արժեքով՝ փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասում:

Ղեկավարության համոզմամբ վերը նշված մոտեցումը ավելի ճշգրիտ է արտացոլում կատարված ներդրումների էությունը, ելնելով բաժանորդագրության պայմանագրերի պայմաններից, որոնք են մասնավորապես Հիմնադրամի նվազագույն եկամուտներ ստանալու պայմանագրային իրավունքը, ներդրման ժամկետի ավարտին բաժնետոմսերի օտարման պարտավորությունը, ներդրման օբյեկտ ընկերությունների մյուս բաժնետերերի՝ բաժնետոմսերը Հիմնադրամից հետ գնելու իրավունքը, ինչպես նաև այլ պայմանագրային պայմանները:

**16 Ֆինանսական գործիքներ**

**16.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ**

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

**16.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

<i><b>Ֆինանսական ակտիվներ</b></i>	<i>(հազար դրամ)</i>	
	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
<i>Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Ներդրումներ ծրագրերում	553,854	482,142
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված փոխառություններ	895,969	1,065,752
Դեբիտորական պարտքեր	232,188	223,773
Մնացորդներ բանկերում	206,448	144,392
	<b>1,888,459</b>	<b>1,916,059</b>
 <i><b>Ֆինանսական պարտավորություններ</b></i>		
	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
<i>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Երկարաժամկետ Փոխառություններ	2,124,271	2,053,190
Վարձակալության գծով պարտավորություն	11,855	17,300
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13,037	13,370
	<b>2,149,163</b>	<b>2,083,860</b>

**17 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ**

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

**Ֆինանսական ռիսկի գործոններ**

*ա) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի

ազդեցությունը Հիմնադրամի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են ներդրումները ծրագրերում և տրված փոխառությունները, դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ	(հազար դրամ)	
	<u>2024թ.</u>	<u>2023թ.</u>
Ներդրումներ ծրագրերում	553,854	482,142
Տրված փոխառություններ	895,969	1,065,752
Դեբիտորական պարտքեր	232,188	223,773
Մնացորդներ բանկերում	206,448	144,392
	<u><b>1,888,459</b></u>	<u><b>1,916,059</b></u>

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Հիմնադրամը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները Հիմնադրամի ներդրումները, տրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը ապահովված են փոխառուների և ներդրման օբյեկտ ընկերությունների հողով, շինություններով և արտադրական տարածքներով:

Ապահովվածության իրական արժեքն է 4,046,727 հազար դրամ (2023թ.՝ 4,026,577 հազար դրամ)՝ գնահատված անկախ գնահատողի կողմից:

Դրամական միջոցների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

**Արժեզրկման գնահատում**

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս Հիմնադրամը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար Հիմնադրամը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ որակական չափանիշներ:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահի համեմատ էականորեն չի փոխվել, ապա պարտքային ռիսկից հնարավոր կորստի պահուստը ճանաչվում է ակտիվի 12-ամսյա պարտքային ռիսկից հնարավոր կորստի գումարի չափով:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահի համեմատ էականորեն ավելացել է կամ առկա են ակտիվի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ, ապա պարտքային ռիսկից հնարավոր կորստի պահուստ ճանաչվում է տվյալ ակտիվի՝ ամբողջ ժամկետի ընթացքում պարտքային ռիսկից հնարավոր կորստի գումարի չափով:

Ակտիվների գծով պարտքային ռիսկից հնարավոր կորստի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$ECL = EAD \times PD \times LGD$ , որտեղ  
 EAD-ն դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող ակտիվի արժեքն է,  
 PD-ն՝ դեֆոլտի հավանականությունը,  
 LGD-ն՝ կորուստը դեֆոլտի դեպքում:

**Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող ակտիվի արժեք (EAD)**

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի: Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա:

**Դեֆոլտի հավանականություն (PD)**

PD- ն ներկայացնում է գործընկերոջ կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է՝ կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտի հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

**Կորուստ դեֆոլտի դեպքում (LGD)**

LGD-ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում՝ շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD-ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր գործընկերների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

12-ամսյա վարկային ռիսկերից հնարավոր կորուստը և ճանաչման պահի համեմատ պարտքային ռիսկի էական աճ ունեցող, սակայն արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ չունեցող ակտիվների կյանքի ընթացքում պարտքային ռիսկից հնարավոր կորուստը հաշվարկվում են ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, իսկ արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ ունեցող ակտիվների դեպքում՝ հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Պարտքային ռիսկից հնարավոր կորստի հաշվարկում դրամական հոսքերի զեղչման նպատակով կիրառվում է ակտիվի սկզբնական ճանաչման պահին արդյունավետ տոկոսադրույքը:

Հիմնադրամի՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի մնացորդները ներկայացված են ծանոթագրություն 6-ում և 7-ում  
*զ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները

<b>2024թ.</b> <i>(հազար դրամ)</i>			Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով		Ընդամենը
	Անտոկոս				
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք			15.8%	13.3%	
Մինչև 1 տարի	13,037	7,800	226,986	247,823	
1-5 տարի	-	5,850	1,092,060	1,097,910	
Ավելի քան 5 տարի	-	-	2,262,294	2,262,294	
	<b>13,037</b>	<b>13,650</b>	<b>3,581,340</b>	<b>3,608,027</b>	

**2023թ.**

(հազար դրամ)

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով		Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		15.8%	13.3%	
Մինչև 1 տարի	13,370	7,800	169,693	190,863
1-5 տարի	-	13,650	1,529,961	1,543,611
Ավելի քան 5 տարի	-	-	3,112,732	3,112,732
	<b>13,370</b>	<b>21,450</b>	<b>4,812,386</b>	<b>4,847,206</b>

Հիմնադրամի իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես, դրամական միջոցները, դեբիտորական պարտքերն ու ներդրումներից և փոխառություններից մուտքերը: Հիմնադրամի ֆինանսական ակտիվներն էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

**18 Իրական արժեքի չափում**

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

**18.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում**

**Անորոշիվացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքին:

**Ներդրումների իրական արժեքի չափում**

Ներդրման իրական արժեքը որոշվել է համապատասխան գնագոյացման մոդելի հիման վրա՝ հաշվի առնելով ներդրումային ընկերության շահաբաժինների վերաբերյալ քաղաքականությունը և նրա պատմական ու ակնկալվող ապագա ներկայացումը, նմանատիպ կազմակերպության համար համապատասխան աճի գործոնը, ինչպես նաև ռիսկով ճշգրտված գեղջման դրույքաչափը: Ելնելով ներդրման պայմանագրային առանձնահատկություններից իրական արժեքը որոշվել է՝ հաշվետու ամսաթվի դրությամբ համապատասխան դրամական հոսքերը գեղջելով ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված վերաֆինանսավորման տոկոսադրույքով: Այս դեպքում ամենազգալի փոփոխականը գեղջման տոկոսադրույքն է:

**Անորոշիվացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ**

Հիմնադրամի ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում: Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է գեղջված դրամական

հոսքերի մեթոդով՝ կիրառելով այն շուկայական տոկոսադրույքները, որոնք Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար՝ համանման տնտեսական միջավայրում համանման արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման նպատակով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է: Հիմնադրամի ֆինանսական գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

Դրամական միջոցների գնահատված հոսքերի զեղչման համար օգտագործված տոկոսադրույքները ներկայացված են ստորև՝

	2024թ.	2023թ.
Տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր	10%-12%	10%-12%
Ներդրումներ ծրագրերում	9.25%	9.25%
ՀՀ Ֆինանսների նախարարությունից գրավով չապահովված փոխառություններ	13.4%	13.4%

**19 Պայմանականություններ**

**19.1 Ապահովագրություն**

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

**19.2 Հարկեր**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ անեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

**20 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում**

Հիմնադրամի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

<i>(հազար դրամ)</i>	Վարկեր	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,990,235	5,435	1,995,670
Դրամային հոսքերից Մարումներ	(70,915)	(7,800)	(78,715)

**Հայաստանում գյուղական տարածքների  
տնտեսական զարգացման հիմնադրամ**

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
31 դեկտեմբեր 2024թ.**

Վճարված տոկոսներ	(100,016)	-	(100,016)
Ոչ դրամային հոսքերից			
Տոկոսի հաշվեգրում	-	18,532	18,532
Վարձավճարի հաշվեգրում	233,886	1,133	235,019
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,053,190	17,300	2,070,490
Դրամային հոսքերից			
Մարումներ	(70,915)	(7,800)	(78,715)
Վճարված տոկոսներ	(98,867)	-	(98,867)
Ոչ դրամային հոսքերից			
Իրական արժեքի ճշտում	-	-	-
Տոկոսի հաշվեգրում	240,863	2,355	243,218
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,124,271	11,855	2,136,126

**21 Կապակցված կողմեր**

Հիմնադրամի կապակցված կողմերում ներառված են հիմնադիրը, հոգաբարձուների խորհրդի անդամները և հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

**21.1 Վերահսկողություն**

Հիմնադրամը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից:

**21.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ**

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

<b>Գործարքներ</b>	<b>2024թ.</b>	<i>(հազար դրամ)</i> <b>2023թ.</b>
<i>Հիմնադիր</i>		
Ֆինանսական ծախսեր	240,863	233,886
Շնորհներից ճանաչված եկամուտ	140,421	154,059
<i>Հիմնական ղեկավար անձնակազմ</i>		
Աշխատավարձ և պարգևատրումներ	16,334	16,029
		<i>(հազար դրամ)</i>
<b>Մնացորդներ</b>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
<i>Հիմնադիր</i>		
Փոխառություններ	2,124,271	2,053,190
Ակտիվներին վերաբերող շնորհներ	1,710,712	1,851,133
<i>Հիմնական ղեկավար անձնակազմ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,261	573

**22 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ**

2025թ. ապրիլի 30-ին Հիմնադրամը և «Ագրոլոգ» ՓԲԸ-ի բաժնետերերը կնքել են համաձայնագրեր, որոնց հիման վրա Հիմնադրամին փոխանցվել է «Ագրոլոգ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 67.65%-ը: Այդ գործարքի արդյունքում Հիմնադրամը դարձել է «Ագրոլոգ» ՓԲԸ-ի 100% բաժնետեր: